

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ»

ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Խումբ`

3

Թեմա`

Երբ ծնողն ու ուսուցիչը կերտում են
առողջ անհատներ

Հետազոտող`

Կարինա Ստեփանյան

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱՇԵՆԻ Լ.ՍԱՐԳՍՅԱՆԻ
ԱՆՎԱՆ ՄԻԶՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ

Ղեկավար`

Թ. ՀԱԿՈԲՅԱՆ

ԳՈՐԻՄ 2022

Բովանդակություն

- Ներածություն /նախաբան/
- Նպատակ
- Խնդիրներ
- Համատեքստ
- Ամփոփում/ եզրակացություն/
- Գրականության ցանկ

*Աշակերտը ոչ թե սափոր է, որ պետք է լցնել
գիտելիքներով, այլ ջահ է, որը պետք է վառել
Մ.Ֆ. Քվինթիլիանոս*

Ներածություն

Մարդկային հարաբերություններում ազատ և համարձակ լինելու համար անհրաժեշտ է վստահություն: Այն ձևավորվում է նախ և առաջ ընտանիքում: Մինչ երեխան կմտնի հասարակություն, որպես նրա լիիրավ անդամ ձևավորվում է իր ընտանիքում: Ընտանիքն է սերմանում նրա մեջ ձգտումներ, որոշ անձնային հատկություններ: Ծնողները երեխայի անձի ձևավորման պատասխանատուներն են: Մոր և հոր միասնությունը, որպես կայուն հենարան, շատ կարևոր է երեխայի համար: Այս պարագայում է, որ նա կարող է վստահ շփվել սոցիալական միջավայրի հետ, այսինքն հենվել ընտանիքի աջակցության վրա: Այն երեխաները, ովքեր զրկված են հորից կամ մորից ունեն անլիարժեքության բարդույթ, որը լավ երևում է դեռահասության ժամանակ:

Ընտանիքից հետո երեխայի զարգացման հարցում մեծ դեր է խաղում սոցիալական միջավայրը՝ մանկապարտեզը, դպրոցը, որտեղ շփվելով իր հասակակիցների հետ, նա նոր փորձ է ձեռք բերում: Այն, ինչ չի տեսել ընտանիքում, հանդիպում է այստեղ և արդեն ինքնուրույն ղեկավարում իր գործողությունները:

Մանկավարժը պետք է ընկերանա երեխայի հետ: Նրանց հարաբերությունները չպետք է լինեն գործնական, այլ ընկերական: Դասի նպատակը պետք է լինի ոչ միայն ուսուցումը, այլ նաև ուսուցման պրոցեսում ուսուցիչ-աշակերտ փոխըմբռնումը: Երեխան պետք է զգա

մտերմություն, վստահություն ուսուցչի կողմից: Եթե մանկավարժը երեխային վերաբերվի որպես զուտ ինֆորմացիա ընդունող սուբյեկտի, ապա ժամանակի ընթացքում նա, իրոք, կդառնա այդպիսին: Իսկ եթե որպես գիտելիքը ընդունողի, վերարտադրողի և մշակողի, ապա կստացվի արդյունավետ համագործակցություն: Ուսուցիչը չպետք է մենակ աշխատի, պետք է թույլ տա, որ աշակերտն արտահայտի թեկուզ իր թերի գիտելիքները, կարծիքները, վախերը: Երկկողմանի աշխատանքը մեծ հնարավորություններ կտա աշակերտին, իսկ ուսուցչին՝ նոր մտահղացումներ:

Աշակերտի նոր գաղափարները, ցանկությունները, առաջարկները չպետք է միանշանակ զսպվեն ուսուցչի կողմից, քանի որ նրա մոտ կարող է թերարժեքության բարդույթ առաջանալ: Ուսուցչի և աշակերտի միջև վստահությունը կնպաստի առողջ անհատի կերտմանը և մնայուն գիտելիքների ձեռք բերմանը: Նրա վատ ցուցանիշներն ի ցույց հանելը, հասակակիցների ներկայությամբ նախատինքը չի խթանում ավելի լավ սովորելու ցանկությանը:

Նպատակ`

Ձևավորել անվախ, ակտիվ, մտածող, վերլուծող, կայացած քաղաքացի :

Խնդիրներ`

- Երեխաների կյանքում գոյություն ունեցող վախերը
- Ընտանիքում և դպրոցում վստահության պակասը

Երբ ծնողն ու ուսուցիչը կերտում են առողջ անհատներ

Կարծում են թեման բավականին արդիական է, քանի որ այսօր դպրոցներում առաջնային, կարևոր համարվող հարցերից մեկն էլ ուսուցիչ-աշակերտ-ծնող օղակի սերտ պահպանման ապահովումն է: Այս օղակի սերտ պահպանմանը կարևորություն է տրվում դեռ նախակրթարանից: Բնականաբար ծնողի կամ օրինական

ներկայացուցչի ներգրավվածությունը սեփական երեխայի կրթության գործընթացին տալիս է մի շարք դրական արդյունքներ: Ռեսուրսի նպատակը միշտ եղել է անփոփոխ՝ նախապատրաստել աշակերտին կյանքին, ձևավորել ժամանակաշրջանի համար հասարակության լիարժեք, ակտիվ, քննադատող, մտածող, վերլուծող քաղաքացի,

մյուս կողմից էլ ծնողի կամ օրինական ներկայացուցչի նպատակն է տեսնել իր երեխային կայացած անհատի, այսինքն այս երկու կողմերի դրական շահերի բախման հետևանքով կունենանք լավ արդյունք: Ռեսուրսի շատ կարևոր է, որ այդ համագործակցությունը լինի գրագետ, կողմերի նկատմամբ ցուցաբերվի ճիշտ մոտեցում, յուրաքանչյուր քայլ մշակել այնպես, որ կողմերը շահագրգիռ լինեն համագործակցության:

Բնականաբար դրական արդյունքի հասնելու համար ուսուցիչը միայնակ չի կարող գործել, փետք է փոխադարձաբար միմյանց օգնելով գործել:

Երեխայի կրթությունը պետք է ուղղված լինի երեխայի անհատականության, տաղանդի, մտավոր ու ֆիզիկական ունակությունների զարգացմանը: Այսպիսով ուսուցիչ- դպրոց- ծնող համագործակցության պահպանումը առնձնահատուկ նշանակություն ունի աշակերտի հաջողության գրավականի համար:

Երեխայի ժառանգական տվյալները ներդրված են ուղեղի կառուցվածքում, զգայարաններում, խոսքաշարժողական օրգաններում և որևէ գործողություն կատարելու հաջող պայմաններից են: Սակայն այդ հաջողությունը մեծ մասամբ ապահովվում է ջանասիրությամբ, աշխատասիրությամբ:

Չմոռանանք նաև, որ կայացած, հզոր պետության հիմքը առողջ, վերլուծող, դատող հասարակությունն է և դրա կայացման ծանր, պատասխանատու, բարդ բեռը դրված է ուսուցչի ուսերին, քանի որ ուսուցիչն է ստեղծում լավ բժիշկ, իրավաբան, հողագործ, ի վերջո նա է տեսնում իր առջև նստած աշակերտի մեջ երկրի ապագան կերտող քաղաքացուն: Ռեսուրսիչը նախ և առաջ պետք է ապրի աշակերտի հոգսերով, խնդիրներով և աշակերտի ձեռքբերումները համարի նաև իրենը: Հենց այդ նվիրվածության մեծ զգացումի շնորհիվ մենք կունենանք կայացած, հզոր պետություն:

Հաշվի առնելով այս ամենը յուրաքանչյուր ուսուցիչ պետք է լինի ծնող և յուրաքանչյուր ծնող պետք է լինի ուսուցիչ, ուստի նրանց համագործակցումը աշակերտի, երեխայի լավագույն գրավականն է:

Երեխայի վախերը անձի զարգացմանը խոչընդոտող ուժ են

Թեման արդիական է այն առումով, որ առողջ սերունդ ունենալն ու կերտելը ոչ միայն ծնողի, ուսուցչի, այլ նաև ողջ հասարակության, ազգի խնդիրն է: Այդ նպատակով իրականացվել են բազմաթիվ հետազոտություններ՝ ինչպես հոգեբանների, այնպես էլ ուսուցիչների և ուսանողների կողմից: ԵՊՀ ուսանողները կատարել էին որոշակի հետազոտություններ, որոնց արդյունքներից էլ կսկսեմ իմ աշխատանքը:

Ուսանողներն առանձնացրել էին տարիքային խմբեր ու ներկայացնում էին դրանցից յուրա քանջուրին բնորոշ հատկությունները: Որոշ տեսությունների համաձայն՝ անհատի ձևավորման գործում էական ազդեցություն են ունենում վախերը: Մարդու մեջ վախերը ձևավորվում են հիմնականում մանկական տարիքում: Դրանց պատճառը կարող է լինել երեխայի անձնական փորձը, օրինակ՝ ծնողներից մեկի մահ, բնակության վայրի կամ մանկապարտեզի փոփոխություն, կոնֆլիկտներ, հիվանդություններ և այլն: Հաճախ իրենց վարքագծով (անուշադրությունը և անտարբերությունը երեխայի նկատմամբ, գերխնամքը, երբ երեխան ամենուր վտանգ է զգում, և այլն) մանկական վախերի պատճառ են դարձնում հենց ծնողները: Հաճախ հանդիպող երևույթ է նաև այն, որ ծնողն անընդհատ վախեցնում է երեխային՝ դրանով բազմապատկելով նրա վախերը: Երեխաների շրջանում վախերի առաջացմանը նպաստում է նաև ծնողների եսասիրությունը: Սա այն դեպքն է, երբ երեխային համոզում են, որ նա «պարտավոր է» ամեն ինչ ճիշտ անել, այլապես ծնողներին կհիասթափեցնի: Հաճախ երեխաները թաքցնում են իրենց վախերը, որպեսզի արժանանան ծնողների կամ ուսուցիչների գովեստներին, ինչի արդյունքում ձևավորվում են ներքին տառապող անհատներ:

Երեխային կարող է բարդույթավորել նաև ծնողների դժգոհությունը նրա սեռից: Ծնողների տարիքը ևս շատ կարևոր է, քանի որ երիտասարդ, կենսախինդ ծնողների երեխաներն ավելի քիչ են հակված վախերի՝ ի տարբերություն 35-40 տարեկան ծնողների, որոնց երեխաներն ընկալում են տազնապները, որոնք էլ հետագայում վերածվում են անվստահության: Այն ընտանիքներում, որտեղ հոր դերն ավելի մեծ է, քան մորը, երեխաներն ավելի քիչ վախեր ունեն: Ըստ հոգեբանների՝ մեծ նշանակությամբ ունի նաև ընտանիքի անդամների թիվը. երեխաների թվի աճը նպաստում է վախերի նվազմանը, իսկ մեծահասակների թվի աճը՝ ընդհակառակը: Ցանկացած տարիք բնորոշվում է որոշակի վախերով:

Առաջին շրջանը հղիության և ծննդաբերության շրջանն է, երբ մոր անհանգստությունն անմիջականորեն փոխանցվում է երեխային: Եթե հղի կինը երկար ժամանակ անհանգիստ և տազնապային վիճակում է, երեխայի օրգանիզմում կարող են առաջանալ ֆունկցիոնալ խանգարումներ: Հղիության ընթացքում և հետծննդաբերական առաջին շրջանում կինն առավել զգայուն է, ուստի երեխային չվնասելու համար անհրաժեշտ է մոր նկատմամբ լինել հոգատար և նրա համար դրական մթնոլորտ ապահովել:

Մինչև 1 տարեկան երեխաների վախերը հիմնականում կապ վում են շրջապատող աշխարհի ճանաչման հետ: 2 տարեկանից երեխային սկսում է անհանգստացնել մոր բացակայությունը, ինչը գնալով աճում է մինչև 7 տարեկանը: 3-ից 5 տարեկան երեխաները սովորաբար ունենում են վախերի եռյակ՝ մե նակություն, մթություն, փակ տարածություն: Ղա է պատճառը, որ նրանք մենակ չեն ուզում քնել, թույլ չեն տալիս անջատել սենյակի լույսն ու փակել դուռը:

Վախերի նկատմամբ զգայունակությունն աճում է 5-7 տարեկանում: 6 տարեկան նախադպրոցականի վախերն ավելի շատ են և ավելի մեծ, քան 7 տարեկան դպրոցականինը: 6-ամյա երեխաներն արդեն գիտակցում են, որ լինում են նաև վատ ծնողներ, ովքեր արդարացի չեն երեխաների նկատմամբ: Վախերին ավելի հակված են «լսող երեխաները, ովքեր մեղքի զգացում են ապրում իրենց համար հեղինակավոր մարդկանց կողմից հաստատված կանոնների խախտման ժամանակ: Այս տարիքում երեխաները շատ զգայուն են ներընտանեկան հարաբերությունների նկատմամբ:

7-11 տարեկան վախեր ունեցող երեխաների թիվը գնալով աճում է, հետևաբար պրոբլեմը առանձնահատուկ ուշադրության կարիք ունի: Տեսնենք հետազոտության արդյունքում պարզված մանկական վախերի պատճառները:

- Ծնողների կողմից մեծ քանակությամբ պահանջներն ու արգելքները
- Ծնողների վախերը
- Ծնողների գերխնամքը
- Սխալվելու, վատ գնահատական ստանալու վախը
- Մանկական տարիքում տարած սթրեսները
- Ընտանիքում հաճախակի կոնֆլիկտները
- Հասակակիցների հետ կոնֆլիկտները...

Զգայուն, էմոցիոնալ երեխաները հաճախ հաճախ վախենում են չլինել այնպիսին, որի մասին լավ են խոսում բոլորը: Ղպրոցահասակ երեխաները վախենում են դպրոց գնալուց: Ղպրոց հաճախելուց չեն վախենում ինքնավստահ, ակտիվ, հեշտ հաղորդակցվող երեխաները: Հենց այս հատկանիշների ձևավորմանն էլ ուղղված պիտի լինի ուսուցչի և ծնողի գործողությունների շարքը: «Ղպրոցական վախերին այդ տարիքում գումարվում են բնական աղետները, պատերազմները, պատմությունները՝ վամպիրների և հրեշների մասին: Եթե երեխայի մոտ նկատվում են այդպիսի վախեր, ապա չպետք է խուճապի մատնվել, առավել ևս անտարբերության մատնել: Այս իրավիճակում պետք է ծնողն ու ուսուցիչը երեխաների համար գտնեն հետաքրքիր (նախասիրած) զբաղմունք, տարբեր շարժուն խաղեր: Այդ դեպքում շատ վախեր ցրվում են ծխի նման և երեխային վերադարձնում հաստատուն պահվածքի:

Տարիների ընթացքում մարդու ուղեղից ջնջվում են տհաճ տպավորությունները և մարդիկ դպրոցը հիշում են ջերմությամբ ու կարոտով: Բայց դպրոցահասակ երեխաների դժվարությունները, հատկապես վախերը, երբեմն կարող են դառնալ հոգեբանական խնդիրների պատճառ:

Ստորև ներկայացնում են հոգեբանների կատարած հետազոտության արդյունքները մի քանի աշակերտների վախերի մասին, որոնք կատարվել են տարիներ առաջ:

ԱՇԱԿԵՐՏ 1.

Ես վախենում էի քննություններից: Ուսուցիչներն անընդհատ վախեցնում էին, որ քննությունները լինելու են բարդ, մայրս անընդհատ ասում էր, որ պետք է ունենալ փայլուն արդյունքներ՝ անվճար ընդունվելու համար:

Չպետք է ճնշել երեխային: Հաճախ ծնողներն ու ուսուցիչները դա անում են իրենց կամքից անկախ, նրանք պնդում են, որ իրենք չեն ճնշում, բայց նույն բանը հաճախակի

կրկնելով երեխայի մեջ տազնապ են առաջացնում:

ԱՇԱԿԵՐՏ 2.

Վախենում էի հիասթափեցնել ծնողներին, որոնք այնպես հավատում էին ինձ, վախենում էի ուսուցիչներիցս, որովհետև նրանք այնքան շատ ներդրում են ունեցել, ջանք ու եռանդ չեն խնայել: Ավելի շատ ոչ թե վախենում էի, այլ՝ ամաչում:

ԱՇԱԿԵՐՏ 3.

Վախենում էի ստանալ վատ գնահատականներ:

ԱՇԱԿԵՐՏ 4.

Վախենում էի գրատախտակի մոտ գնալ:

ԱՇԱԿԵՐՏ 5.

Վախենում էի խիստ և պահանջկոտ ուսուցիչներից:

Ոչ միշտ է, որ ծնողն ու ուսուցիչը ճիշտ են լինում, հետևաբար պետք է աջակցել երեխային, ընդունել նրան այնպիսին, ինչպիսին կա: Չպետք է ճնշել նրան, ձգտելով հասնել այնպիսի հաջողությունների, որոնց նա չի կարող հասնել: Պետք է մտածել, թե ինչ ենք ուզում երեխայից և ինչու: Չպետք է երեխաների միջոցով իրականացնել սեփական երազանքները՝ անապայման ունենալ հանրապետական օլիմպիադայում հաղթող երեխա կամ ոսկե մեդալակիր: Պետք է հասկանալ, որ երեխան մեր սեփականությունը չէ, նա ունի իր կյանքը և ձգտումները:

Վախի դեմ ամենաարդյունավետ միջոցը երեխայի հետ լավ հուզական շփումն է, վստահությունը, նրբանկատ և զգույշ վերաբերմունքը ընտանիքում միմյանց նկատմամբ: Ազատորեն դրսևորեք քնքշություն և հոգատարություն: Ընդունեք երեխային այնպիսին, ինչպիսին նա կա, առանց համեմատվելու այլ երեխաների հետ:

Նկարչական մեթոդը շատ արդյունավետ է վախերի հետ աշխատելու համար: Երեխային հրավիրում են նկարել այն, ինչից նա վախենում է: Վախ նկարելը ենթադրում է հանդիպել, բայց մթնոլորտը հանգստացնող է, քանի որ մայրիկն ու հայրիկը մոտ են՝ ուժի և անվտանգության մարմնացում: Հոգեկան շփումը վախի հետ, նրա հետ շփումը հաճախ ինքնին նվազեցնում է մանկության փորձառությունների ծանրությունը:

Թղթի վրա պատկերելով իր վախը՝ երեխայի համար ավելի հեշտ է դրսից հեռանալ նրանից, մտածել նրա մասին որպես նախկին, անցյալ:

Երեխաների վախերի ցուցակը կազմելիս և երեխայի բողոքները լսելիս կարեկցեք նրան, բայց մի սարսափեք նրա հետ: Զրույցից հետո առաջարկեք նկարել ինչ-որ վախ կամ դրա հետ կապված մի քանի իմաստով: Վերաբերվեք այս առաջադրանքին որպես ձեր երեխայի հետ շփվելու ստեղծագործ գործընթացի: Նկարելիս փորձեք արտահայտել ձեր հավանությունը, դա նրա հանդեպ հպարտություն կառաջացնի և կբարձրացնի երեխայի ինքնագնահատականը:

Պակաս արդյունավետ չէ խաղի մեթոդը: Խաղը կարող է օգնել երեխաներին հաղթահարել իրենց վախերը: Դա այն խաղն է, որը թույլ է տալիս հասկանալ երեխաների փորձառությունները, հետաքրքրությունները, կարիքները, բնավորությունը, խառնվածքը: Խաղում երեխան կարող է բաց թողնել իր հույզերը, ցանկությունները, ձեռք բերել շփման փորձ և ընդլայնել իր ծանոթների շրջանակը, սովորել կառավարել իրեն, հետևել կանոններին, զարգացնել երևակայությունն ու ֆիզիկական ճարտարությունը, ամրապնդել ինքնավստահությունը: Կռիվ խաղալով, թաքստոցով, թաքստոցով, ծառերի վրա մագլցելով, ավազակ կազակների կերպարանքով, երեխաներն իրենք են ազատվում իրենց վախերից:

Որպեսզի երեխան չվախենա ֆիլմերի, մուլտֆիլմերի սարսափելի կերպարներից, օգտակար է նրան հրավիրել փորձել հանդես գալ որպես վախեցնող կերպար: Պատմություն հորինեք և ձեր երեխայի հետ տանը խաղացե՛ք: Բացասական դերի ներկայացումն անհրաժեշտ չէ, որպեսզի ամաչկոտ երեխաներին, և առավել ևս ներհտիկ ռեակցիաներով երեխաներին սկսեն ագրեսիվ վարքագիծ դրսևորել: Դերային խաղի նպատակն է ձերբազատվել վախից՝ տիրապետելով չարագործին բնորոշ գծերին, մանիպուլյացիայի ենթարկելով նրան խաղի մեջ և արտահայտելով նախկինում ճնշված այս կերպարի վախի պատճառով ճնշված զգացմունքները, ինչպիսիք են. Նապաստակը պետք է գայլի հագուստով լինի»: Հետո իրենց անկանխատեսելիությամբ, անհասկանալիությամբ ու ֆատալիզմով նախկինում անհասանելի ու վախեցնող ագրեսիայի, չարության, խաբեության պատկերները կորցնում են նման լուսապսակ երեխայի երևակայության մեջ:

Ծնողներն ու ուսուցիչները պետք է իրենց երեխային տրամադրեն էմոցիոնալ աջակցություն: Ծնողների ու ուսուցիչների կողմից կարեկցանքն ու ցավալի իրավիճակի ըմբռնումը արդեն իսկ հաջողության կեսն է վախերով խնդիրները լուծելու հարցում: Ձեր հիմնական խնդիրը ոչ այնքան կոնկրետ մանկական վախի հետ գլուխ հանելն է, որքան երեխային սովորեցնել կառավարել իրեն, համարձակորեն դիմակայել վտանգին, հանգիստ, առանց վիրավորանքի ու զրգման դիմակայել կյանքի անխուսափելի դժվարություններին ու խոչընդոտներին: Սովորեք հավատալ երեխային, նրա ներքին ուժերին, նրա հնարավորություններին և կարողություններին: Փորձեք երեխայի հետ ձեր զրույցներում շեշտադրումներ դնել, որպեսզի նա չզգա ապրել թշնամական աշխարհում, որը լի է խաբեությամբ և պատժով կախված ամեն սխալ քայլից :

Ինչի՞ց են վախենում տղաներն ու աղջիկները

Եական դեր են խաղում տղաների և աղջիկների հոգեկանի զարգացման տարբերությունները: Շատերը գիտեն, որ աղջիկները ընտանիքում ավելի էմոցիոնալ հարաբերություններ են ընկալվում: Կոնֆլիկտային ընտանիքների նախադարձական տարիքի աղջիկների մոտ առավել հաճախ հայտնաբերվում են վախեր կենդանիների, տարրերի, վարակի, լուրջ հիվանդության և մահվան վախի նկատմամբ: Իսկ տղաների մոտ այս տարիքում ամենատարածված վախերն են սարսափելի երազների ու ծնողների վախը: Նման վախերը մի տեսակ հուզական արծազանք են կոնֆլիկտային իրավիճակին, որն առաջանում է ընտանիքում:

Աղջիկները ոչ միայն ավելի շատ վախեր ունեն, քան տղաները, այլև նրանց վախերն ավելի սերտորեն կապված են միմյանց հետ՝ հիմնականում անձի հուզական ոլորտի հետ:

Ծնողները պետք է հաշվի առնեն, որ երեխաների վախերի առաջացումը ուղղակիորեն կախված է տարբեր տարիքի երեխաների հուզական վարքագծի զարգացումից: Երբ երեխան սովորում է տարրական դպրոցում, նա մեծ հոգեբանական և ֆիզիկական սթրես է ստանում: Նա պետք է կատարի մի շարք պատասխանատու դպրոցական պարտականություններ, ինչը ենթադրում է ուսուցչի և դասընկերների համապատասխան գնահատականներ: Եվ այս ամենը երեխայի մոտ որոշակի փորձառությունների տեղիք է տալիս: Ավելի երիտասարդ ուսանողները կարող են բուռն արծազանքել որոշ երևույթների, որոնք ազդում են իրենց վրա: Շատ հստակ դրսևորվում է երեխաների հուզական պահվածքը, երբ նրանք դիտում են ներկայացում: Բազմաթիվ ժեստերը, շարժունակությունը, վախից հաճույքի անցումներն ապացուցում են, որ շատ բաներ հուզականորեն գրավում են երեխային և հանգեցնում վառ հուզական ռեակցիաների: Ներկայացում դիտելիս աղջիկներն ավելի բուռն են արծազանքում հերոսների խնդիրներին, քան տղաները: Աղջիկները չեն ամաչում իրենց արցունքներից, իսկ տղաները զսպում են իրենց զգացմունքները:

Պարզելու համար պահպանվում են արդյոք երեխաների վերոհիշյալ վախերը, ավագ դասարաններում կատարեցի հետազոտություն: Պարզվեց, որ աշակերտների մեծ մասի մոտ չկա գրատախտակի մոտ գնալու վախ, բայց ավելացել են նոր վախեր: Երեխաների մեծ մասի մոտ կա հայրենիքը կորցնելու, նոր պատերազմ սկսելու, ազգային ինքնությունը կորցնելու, ամենուր դավաճանի հանդիպելու վախ: Հենց այստեղ է, որ ուսուցիչը պետք է գտնվի իր բարձրության վրա և կարևորի կրթության, գիտության դերը:

Ծնողների մոտ գերակշռում են վախերը համակարգչային խաղերի նկատմամբ: Այն բավականին մեծ արագությամբ ներթափանցել է շատ ընտանիքներ և դարձել ընտանիքների կործանման պատճառ: Ահա այստեղ է, որ աշակերտ- ուսուցիչ- ծնող օղակը պետք է անդադար սերտ կապի մեջ լինի:

Երեխաների վախերի կանխարգելում.

Երեխաների վախերի կանխարգելումը երեխայի ընդհանուր առողջության համար նախադրյալների ձևավորումն է: Առավուտյան ֆիզիկական վարժություններ, ֆիզիկական դաստիարակություն դպրոցում, սպորտային բաժիններ՝ այս ամենը նպաստում է օրգանիզմի ընդհանուր հզորացմանը: Մեծ դեր է խաղում նաև երեխայի սնունդը: Ավելի երիտասարդ ուսանողի նյարդային համակարգի համար անհրաժեշտ է որոշակի քանակությամբ հանքանյութեր, վիտամիններ և ամինաթթուներ:

Երեխաների վախերի կանխարգելումը ընտանիքում բարենպաստ հուզական մթնոլորտի ստեղծումն է: Տանը հանգիստ, համաչափ միջավայրը և ծնողների միջև վստահելի հարաբերությունները երեխաների մեջ անվտանգության զգացում են ստեղծում:

Ոչ պակաս կարևոր է աշակերտների ազատ ժամանակը ճիշտ կազմակերպելը: Նրանց պետք է շեղել բացասական մտքերից և զգացմունքներից: Դա անելու լավագույն միջոցը խաղալն է: Ավելին, կարևոր է, որ երեխաներն իրենք ընտրեն այն խաղերը, որոնք իրենց դուր են գալիս: Դասերը պետք է կազմակերպվեն հետաքրքիր՝ համակարգիչների միջոցով: Աստիճանաբար ամբողջ խաղերը պետք է փոխարինվեն ուսումնական նյութերով:

Երբեմն կարելի է նաև կազմակերպել դեմ առ դեմ գրույցներ, քննարկումներ, փոխանակել տեղեկություններ ,կարծիքներ և ռեսուրսներ, երբեմն միմյանց հետ մշակել և վերլուծել որևէ տեղեկություն, քաջալերել և աջակցել միմյանց ընդհանուր նպատակին հասնելու համար:

Երբեմն կարելի է կազմակերպել այնպիսի խմբային աշխատանք , ստեղծել իրավիճակ, որտեղ խմբի յուրաքանչյուր անդամ պատրաստ կլինի փոխանակել մտքեր ,կրել պատասխանատվություն ուսման որակի բարձրացման համար,կամ պատրաստ կլինի իր գործողություններով նպաստել դասընկերներին խրախուսելու : Որոշ ժամանակ աշխատանք տանելուց հետո խմբի անդամներով քննարկել ,թե համագործակցության արդյունքում ինչ հաջողությունների են հասել: Համագործակցումը նաև խմբի անդամների միջև ապահովվում է դրական փոխկապակցվածություն: Այսինքն դրական փոխկապակցվածության շնորհիվ խմբում ձևավորում է միմյանց օգնելու,խրախուսելու, աջակցելու մթնոլորտ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով հետազոտությունները ցույց են տվել ,որ ուսուցչի համագործակցումը սովորողի ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ ` կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցում ,ոչ միայն բարելավվում է աշակերտների վարքն ու հաճախումը, այլև դրականորեն է ազդում աշակերտների ձեռքբերումներին : Դպրոցի և ընտանիքի միջի երկկողմանի զարգացմանը նպաստող կարևոր գործողություններից մեկն է:

Արդյունավետ հաղորդակցման համար անհրաժեշտ է ,որ ուսուցիչները և ծնողները միմյանց հետ տեղեկատվություններ փոխանակեն : Կանոնավոր և արդյունավետ է , քանի որ աճում է ծնողների ներգրավվածությունը, նրանց կողմից դպրոցի

զնահատականը բարձրանում է և ձևավորվում է դպրոցի նկատմամբ դրական կապվածություն:

Ուսուցիչ-ծնող կապը աշակերտի ուսումնադաստիարակչական գործընթացի նպատակային և բարեհաջող կազմակերպչական կարևորագույն բաղադրի օղակներից մեկն է:

Այսպիսով կարելի է ձևավորել համագործակցության շնորհիվ խելացի, դաստիարակված աշակերտ : Նմանատիպ աշակերտ ստեղծելն էլ հենց բխում են երեք կողմերի շահերից , չմոռանանք աշակերտներին ,որոնք այս ողջ գործընթացի կնտրոնն է , այն կենտրոնը, որի շուրջ պտտվում է մնացած ամեն ինչ: Համագործակցության շնորհիվ առաջնային պլան է մղվում միասնական ուժերով վաթթարագույն տարաբնույթ երևույթները արմատախիլ անելու և, գոնե դրական անհրաժեշտ նվազագույնը սերմանելու նպատակով:

Համատեղ աշխատանքի ,փոխըմբռնման , միմյանց արժևորելու և կարևորելու գործոնի շնորհիվ էլ հնարավոր կլինի լուծել համագործակցության բացակայության հետևանքով առաջացած խնդիրները` աշակերտների անտարբերությունը ուսման մեջ, կարգապահական խնդիրները, աշակերտների մոտիվացիայի բացակայությունը և նման այլ խնդիրներ : Նաև աշակերտը պետք է հավատա , վստահի և ուսուցչին , և ծնողին, և սեփական ուժերին :

Գրականություն

1. Գ. Ն . Հարությունյան «Մանկավարժական խնդիրները և դրանց լուծման
2. Ա. Պետրոսյան «Դասղեկական աշխատանքի կազմակերպումը դպրոցում» :
3. «Երևանի համալսարան» ամսագիր
4. «Գիտելիք» ուսումնակրթական տեղեկատվական քառամսյա հանդես
5. Гаврилова «Страхи у детей младшего школьного возраста»